ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 740 -Ա 14 նոյեմբերի 2024 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈԼԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ԱԼՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջները, ինչպես նաև Կարեն Մելիքյանի գրությունը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Մելիքյանին 2024 թվականի նոյեմբերի 18-ից 2024 թվականի նոյեմբերի 22-ը գործուղել Էստոնիայի Հանրապետություն՝ մայրաքաղաք Տալլինում անցկացվող «Հայաստանում կրթության բարեփոխումների իրականացմանն աջակցելը և ուսուցիչների մասնագիտական զարգացմանը նպաստելը» ծրագրի շրջանակում սեմինարին և պրակտիկային մասնակցելու նպատակով:

2. Ընդունել ի գիտություն, որ Կարեն Մելիքյանի՝ Էստոնիայի Հանրապետություն գործուղվելու ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի հաշվին:

3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Մելիքյանի՝ գործողումից վերադառնալուց հետո ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի պահանջը:

4" Կարեն Մելիքյանի գործուղման ժամանակահատվածում «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ալվարդ Վարդանյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Նորիկ Մխիթարյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

14.11.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ